ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/14

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.01.2018թ. թիվ 03/26-3/1218-18 գրությամբ «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.01.2018թ. թիվ ԴՎԱ/238 գրության հիման վրա, 26.01.2018թ. թիվ 03/26-3/1218-18 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Խորհուրդը կարծիք ստանալու նպատակով 29.01.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/1318-18 գրությամբ, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով դիմել է «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ին:

Խորհրդի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ընկերության կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 31.01.2018թ. ժամը 11:20-ի և 20.02.2018թ. ժամը 11:20-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 23.01.2018թ. թիվ ԴՎԱ/238 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի միջև 15.07.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/6-12» ծածկագրով գնման պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ Պատվիրատուն 17.01.2018թ. միակողմանի լուծել է վերոհիշյալ պայմանագիրը՝ 5 հավաքածու ռադիոհաճախականության վերահաղորդման կայանների (ԳԿԱ տիրույթի վերահաղորդիչ), 20 հավաքածու ռադիոկայանների (ռադիոկայան ԿԱ տիրույթի ICOM-IC-78 ռադիոկայան), 15 հավաքածու հեռահախորդակցման միջոցների (տյուներ AT-130 ալեհավաքի ավտոմատ), 30 հավաքածու ռադիոընդունիչների (ռադիոընդունիչ ICOM-IC-R75), 20 հավաքածու ռացիաների (ռադիոկայան ICOM-IC-F 5026H ալեհավաքով), 20 հավաքածու ռացիաների (ռադիոկայան ICOM-IC-F 6023H ալեհավաքով) 20 հատ ալեհավաքների և արտացոլիչների (ալեհավաք DIAMOND) մասով:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ Պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 19.01.2018թ. ուղարկվել է Ընկերության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին և նույն օրը հրապարակվել <u>www.gnumner.am</u> հասցեով ինտերնետային կայքում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 31.01.2018թ. ժամը 11:20-ի և 20.02.2018թ. ժամը 11:20-ի նիստերի վերաբերյալ, 20.02.2018թ. ժամը 11:20-ի նիստին ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/14 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/14 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի միջև 15.07.2017թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-1/6-12» ծածկագրով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետով «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N 2) գնորդին (տվյալ դեպքում՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը) կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված N 3):

3. Պայմանագրի հավելված N 2-ի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով 2017թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել 23 տեսակի և քանակի ապրանք, այդ թվում՝ 5 հավաքածու ռադիոհաճախականության վերահաղորդման կայաններ (ԳԿԱ տիրույթի վերահաղորդիչ), 20 հավաքածու ռադիոկայաններ (ռադիոկայան ԿԱ տիրույթի ICOM-IC-78 ռադիոկայան), 15 հավաքածու հեռահախորդակցման միջոցներ (տյուներ AT-130 ալեհավաքի ավտոմատ), 30 հավաքածու ռադիոընդունիչների (ռադիոընդունիչ ICOM-IC-R75), 20 հավաքածու ռացիաներ (ռադիոկայան ICOM-IC-F 5026H ալեհավաքով), 20 հավաքածու ռացիաներ

(ռադիոկայան ICOM-IC-F 6023H ալեհավաքով), 20 հատ ալեհավաքներ և արտացոլիչներ (ալեհավաք DIAMOND):

4. «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ին ուղղված 19.01.2018թ. ԴՎԱ/183 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ Պատվիրատուն, հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի միջև 15.07.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/6-12» ծածկագրով պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ 17.01.2018թ. միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.01.2018թ. թիվ 03/26-3/1218-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.01.2018թ. թիվ ԴՎԱ/238 գրությունը և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՕ-21-Ն օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

«Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի միջև 15.07.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/6-12» ծածկագրով պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետով «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N 2) գնորդին (տվյալ դեպքում՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը) կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ գնորդը պարտավորվել է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված N 3):

Պայմանագրի հավելված N 2-ի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով 2017թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել 23 տեսակի և քանակի ապրանք, այդ թվում՝ 5 հավաքածու ռադիոհաճախականության վերահաղորդման կայաններ (ԳԿԱ տիրույթի վերահաղորդիչ), 20 հավաքածու ռադիոկայաններ (ռադիոկայան ԿԱ տիրույթի ICOM-1C-78 ռադիոկայան), 15 հավաքածու հեռահախորդակցման միջոցներ (տյուներ AT-130 ալեհավաքի ավտոմատ), 30 հավաքածու ռադիոընդունիչների (ռադիոընդունիչ ICOM-IC-R75), 20 հավաքածու ռացիաներ (ռադիոկայան ICOM-IC-F 5026H ալեհավաքով), 20 հավաքածու ռացիաներ (ռադիոկայան ICOM-IC-F 6023H ալեհավաքով), 20 հատ ալեհավաքներ և արտացոլիչներ (ալեհավաք DIAMOND):

ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված 14.12.2017թ. գրությամբ «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն հայտնել է, որ համաձայն 15.07.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/6-12» ծածկագրով պայմանագրի, Ընկերությունը պարտավոր է մատակարարել հետևյալ ապրանքները.

	Անվանում	քանակ	գումար
1	Ավտոմատային հեռախոսային կայանների սարքեր (Սնուցման բլոկ PS-19 AC Coral)	2	1 333 620
2	ռադիոհաճախականության վերահաղորդման կայաններ (ԳԿԱ տիրույթի վերահաղորդիչ)	5	7 767 360
3	ռադիոկայաններ (ռադիոկայան ԿԱ տիրույթի ICOM-1C-78 ռադիոկայան)	20	5 635 800
4	հեռահախորդակցման միջոցներ (տյուներ AT-130 ալեհավաքի ավտոմատ)	15	2 148 300
5	Ռադիոկայաններ (ԿԱ տիրույթի ռադիոկայան VX-1700 1 ԿՎ հզորության)	4	13 816 080
6	Ռադիոընդունիչներ (ռադիոընդունիչ ICOM-IC-R75)	30	9 820 800
7	ռացիաներ (ռադիոկայան ICOM-IC-F 5026H ալեհավաքով)	20	2 194 800
8	ռացիաներ (ռադիոկայան ICOM-IC-F 6023H ալեհավաքով)	20	2 194 800
9	ալեհավաքներ և արտացոլիչներ (ալեհավաք DIAMOND)	20	288 000
10	Ցանցային բաժանարար (Մոդեմ DSL)	10	4 715 100
			49 914 660

Նույն գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ վերը նշված ապրանքների մատակարարումը ուշանում է՝ պայմանավորված արտաքին գործոններով, մասնավորապես՝ կապի միջոցների շուկան խիստ սահմանափակ է և դրանց ձեռքբերումը, փաստաթղթավորումը, ինչպես նաև ներմուծումը բավականաչափ ժամանակատար է: Միաժամանակ, նախատոնական գերծանրաբեռնվածության հետևանքով նույնպես

առաջանում է ձգձգում ներմուծման և բեռնափոխադրման ընթացքում: Այս ամենից բացի, կապի միջոցների մաքսազերծման գործընթացը, ապրանքի առանձնահատկությունից ելնելով, տևում է մինչև մեկ ամիս:

Ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարությանը խնդրել է թույլ տալ նշված ապրանքների մատակարարումն իրականացնել մինչև 31.01.2018թ. և տրամադրել 49 914 660 ՀՀ դրամի կանխավճար՝ Ընկերության կողմից բանկային երաշխիք ներկայացնելու պայմանով:

ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետին ուղղված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի 21.12.2017թ. թիվ ԴՎԱ/4791 գրության համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով ի սկզբանե սահմանված ժամկետի լրանալը, իսկ տվյալ պայմանագրի գնման ժամանակացույցով մատակարարման վերջնաժամկետ է սահմանված 2017թ. 3-րդ եռամսյակը:

Նույն գրության համաձայն՝ Ընկերությունը 21.12.2017թ. դրությամբ 49 914 660 ՀՀ դրամից մատակարարել է 19 864 800 ՀՀ դրամի ապրանք, մնացորդը կազմում է 30 049 860 ՀՀ դրամ:

ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության, որպես Պայմանագրի 9.13 կետով նախատեսված պատասխանատու ստորաբաժանման կողմից 20.12.2017թ. կազմված՝ Պայմանագրի կատարման վերաբերյալ թիվ 10/171 եզրակացության համաձայն՝ ըստ Պայմանագրով նախատեսված ժամանակացույցի ոչ ուշ քան 30.09.2017թ. սահմանված ժամկետում «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն չի մատակարարել՝ 5 հավաքածու ռադիոհաճախականության վերահաղորդման կայաններ (ԳԿԱ տիրույթի վերահաղորդիչ), 20 հավաքածու ռադիոկայաններ (ռադիոկայան ԿԱ տիրույթի ICOM-IC-78 ռադիոկայան), 15 հավաքածու հեռահախորդակցման միջոցներ (տյուներ AT-130 ալեհավաքի ավտոմատ), 30 հավաքածու ռադիոընդունիչների (ռադիոընդունիչ ICOM-IC-R75), 20 հավաքածու ռացիաներ (ռադիոկայան ICOM-IC-F 5026H ալեհավաքով), 20 հավաքածու ռացիաներ (ռադիոկայան ICOM-IC-F 6023H ալեհավաքով), 20 հատ ալեհավաքներ և արտացոլիչներ (ալեհավաք DIAMOND):

«Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ին ուղղված 19.01.2018թ. ԴՎԱ/183 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության

նախարարության և «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի միջև 15.07.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/6-12» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր էր Պատվիրատուին 2017թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել 5 հավաքածու ռադիոհաճախականության վերահաղորդման կայաններ (ԳԿԱ տիրույթի վերահաղորդիչ), 20 հավաքածու ռադիոկայաններ (ռադիոկայան ԿԱ տիրույթի ICOM-1C-78 ռադիոկայան), 15 հավաքածու հեռահախորդակցման միջոցներ (տյուներ AT-130 ալեհավաքի ավտոմատ), 30 հավաքածու ռադիոընդունիչների (ռադիոընդունիչ ICOM-IC-R75), 20 հավաքածու ռացիաներ (ռադիոկայան ICOM-IC-F 5026H ալեհավաքով), 20 հավաքածու ռացիաներ (ռադիոկայան ICOM-IC-F 6023H ալեհավաքով), 20 հատ ալեհավաքներ և արտացոլիչներ (ալեհավաք DIAMOND):

Նշված գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պատվիրատուի և «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի միջև 15.07.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/6-12» ծածկագրով պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ 17.01.2018թ. միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

Այսպես՝ Պայմանագրի 3.1.7 կետը սահմանում է, որ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.7.1 կետի համաձայն՝ վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

«Գնումների մասին» ՀՕ 206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:***

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, Խորհուրդն արձանագրում է, որ «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ն թույլ է տվել ՀՀ պաշտպանության նախարարության և «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի միջև 15.07.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-1/6-12» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների ավելի քան մեկ անգամ խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, քանի որ Ընկերությունը Պայմանագրով պարտավորվել է 2017թ. 3-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել 23 տեսակի և քանակի ապրանք, որից 7 տեսակի ապրանք համապատասխան քանակներով ընդհանրապես չի մատակարարել, որը հանգեցրել է նաև Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետի հիմքով պայմանագրի էական խախտման:

«Գնումների մասին» ՀՕ 206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 17.01.2018թ., հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի Խորհուրդը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 26.01.2018թ. թիվ 03/26-3/1218-18 գրությամբ ներկայացված «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.01.2018թ. թիվ 03/26-3/1218-18 գրությամբ «Մ-Թրեյդլայն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00130656) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**